Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/52 »* ծածկագրով

էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/52-1

ք. Երևան ____/_____/2022թ.

« Երևանի քաղաքապետարան »-ը ի դեմս Գ. Մուրադյան ի, որը գործում է « Երևանի քաղաքապետարան »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և « ԱՁ Լուսինե Ղազարյան »-ը, ի դեմս տնօրեն Լուսինե Ղազարյան ի, որը գործում է « ԱՁ Լուսինե Ղազարյան »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Շենգավիթ վարչական շրջանի կարիքների համար մշակութային միջոցառումների ձեռքբերում ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների։

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համախատասխան և N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներով

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N1 և/կամ N 2 հավելվածին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ։

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին։

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:6

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում,

հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 4908000.00 AMD(չորս միլիոն ինը հարյուր ութ հազար դրամ) ՀՀ դրամ:7 17

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով։ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար։

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի *1* (*մեկ*) տոկոսի չափով:921Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում։

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի *0.1*(*զրո ամբողջ մեկ տասնորդական*) տոկոսի չափով։

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ։

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով։

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց։

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

__ [5]:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց

հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

11[6]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն

կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

8. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ	**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
Երևանի քաղաքապետարան	**ԱՁ Լուսինե Ղազարյան**
Արգիշտիի փող. 1	**Երևան, Արցախի 4-րդ նրբ. 10/1 շ., բն. 113**
Գանձապետարան	**Ամերիաբանկ ՓԲԸ**
900022750542	**1570075367070100**
02593108	**87898963**
----------	**----------**
/ստորագրություն/	**/ստորագրություն/**
Կ.Տ	**Կ.Տ**

MURADYAN GOR 3807720189 ԱՄՀ

Digitally signed by MURADYAN GOR 3807720189
DN: c=AM, sn=•••••••••, givenName=•••, serialNumber=64f4792e3efd, cn=MURADYAN GOR 3807720189
Date: 2022.04.04 16:24:01 +04'00'

Digitally signed by GHAZARYAN LUSINE 5110700621
Date: 2022.04.04 11:45:12 AMST

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ։

17[6]*Կիրառվում է, եթե կնքվում էնախագծայինփասաթղթերիքաղաքաշինականփորձաքննության ծառայություններիմատուցմանպայմանագիր*

[17]*Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են։*

[8]*Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից։ Ընդ որում կնքվելիքպայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուիև*

Կատարողիմիջև համաձայնեցված չափով:Եթեպայմանագրովչինախատեսվումկանխավճարիհատկացում, ապասույն կետըհանվումէնախագծից:

[9]Եթեպայմանագիրըկնքվելէ«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապատուգանքըհաշվարկվումէայնհամաձայնագրիգնինկատմամբ, որի շրջանակումարձանագրվելէստանձնվածպարտավորությունների չկատարմանկամչպատշաճկատարմանհանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[10]Պետականբյուջեիմիջոցներիհաշվինպարտավորություններչառաջացնող գնումներիդեպքումսույննախադասությունըպայմանագրիցհանվումէ:

[11] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

[12]Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

[13]Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով:Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Հավելված N 1
____/_____/2022թ. կնքված
ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/52 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Ծառայության			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	79951110/66	Ծաղկազարդի տոն	Նորագավիթի Սբ. Գևորգ և Ն. Չարբախի Սբ. Խաչ եկեղեցիների բակերում պետք է կազմակերպել առնվազն 1 ժամ տևողությամբ միջոցառումներ: Յուրաքանչյուր միջոցառման համար անհրաժեշտ է մեկ հնչյունային տեխնիկա՝ 3-4կՎտ հզորությամբ, 1 հաղորդավար, երգի ու պարի 1 համույթ, ուռենու ճյուղեր և ծաղիկներ՝ առնվազն 200 հատ գլխազարդ պատրաստելու համար: Եկեղեցիների բակերում պետք է կազմակերպել ժենգյալով հացի պատրաստում և հյուրասիրություն՝ յուրաքանչյուր եկեղեցու բակում առնվազն 150 հատ: Միջոցառման անցկացման, ինչպես նաև հյուրասիրության կազմակերպման լրացուցիչ մանրամասները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Կցված է 92271f23.rar
2	79951110/67	Հիսուս Քրիստոսի հրաշափառ	Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոն կամ Զատիկ

		Հարության տոն (Զատիկ	նշելու համար պետք է Նորագավիթի Սբ. Գևորգ, Ն. Չարբախի Ս. Խաչ և Վ. Շենգավիթի Սրբոց Առաքելոց եկեղեցիների բակերում անհրաժեշտ է կազմակերպել տոնական միջոցառումներ՝ յուրաքանչյուրը առնվազն 1 ժամ տևողությամբ: Յուրաքնչյուր միջոցառման համար անհրաժեշտ է 1 հնչյունային տեխնիկա՝ 3-4կՎտ հզորությամբ, 1 հաղորդավար, ազգագրական երգի-պարի 1 համույթ, 1 զատիկի և 1 ձվի կերպար, 2 հայտնի երգիչ-կատարողներ: Միջոցառումների ընթացքում յուրաքանչուր եկեղեցու բակում պետք է կազմակերպել հյուրասիրություն (ֆուրշետ) և սպասարկում՝ առնվազն 1 մատուցողով: Հյուրասիրության համար պետք է ապահովել օրվա խորհրդին համահունչ ձևավորում: Անհրաժեշտ է ապահովել առնվազն 450 հատ հավկիթ, 200 հատ լավաշ, թարմ կանաչիների տեսականի, տոնական փլավ (բրնձով, չրերով և ընդեղենով), մատուցումը անհատական ափսեներով, առնվազն 6 հատ Զատկի տոնի ավանդական թխվածք (կուլիչ)՝ յուրաքանչյուրը նախատեսված առնվազն 10 հոգու համար, առնվազն 120 հատ կեքս՝ տոնական, գունավոր ձևավորմամբ, տապակած կանաչիներից պատրաստված ուտեստներ, 6 շիշ գինի, մրգի տեսականի, քաղցրավենիք՝ կոնֆետներ, ադի բուդի, աղի և քաղցր ձողիկներ: Միջոցառման անցկացման, հյուրասիրության կազմակերպման լրացուցիչ մանրամասները, ինչպես նաև երգիչների անունները և նրանց երգացանկերը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Կցված է 184217c2.rar
3	79951110/68	Մայրության, գեղեցկության և սիրո տոն	Անհրաժեշտ է վարձակալել Շենգավիթ վարչական շրջանի տարածքում գտնվող համերգային դահլիճ՝ 220-240 նստատեղով և ընդարձակ նախասրահով (նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ): Դահլիճի բեմահարթակի երկարությունը պետք է լինի նվազագույնը 5 գմ, դիմային հատվածը պետք է

				ձևավորվի բնական ծաղիկներով, ձևավորումը համապատասխանի օրվա խորհրդին: Կազմակերպվող համերգային ծրագրի տևողությունը պետք է լինի 1-1.5 ժամ, անհրաժեշտ է՝ հնչյունային տեխնիկա 5-6 կՎտ հզորությամբ, լուսային տեխնիկա, ձայնային սարքավորումներ բարձրախոսներով, որոնք պետք է ապահովեն համույթների, երգիչների, մասնակիցների ելույթների և կատարումների բարձրորակ լսելիությունը: Համերգային ծրագրի ապահովման համար անհրաժեշտ է հաղորդավար, 2 համույթ, 8 հայտնի կատարողներ կամ հանրահայտ խումբ (նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ): Համերգային ծրագրի ավարտից անմիջապես հետո նախասրահում միջոցառման առնվազն 200 մասնակիցների համար պետք է կազմակերպված լինի հյուրասիրություն (ֆուրշետ), որի համար անհրաժեշտ է կանապեներ՝ լոռի, ռոքֆոր և մեծ անցքերով պանիրներով, կիսաապխտած և ապխտած երշիկներով, խոզապուխտով, տավարի ֆիլեով, բանջարեղենով, ձիթապտղի տեսականի՝ կանաչ, սև, առողջ, մեծ հատիկներով (տարբեր ապրանքանիշերի), կիտրոն, տարտալետներ աղցաններով՝ առնվազն 3 տեսակի,մրգային կոմպոզիցիա՝ արքայախնձոր, կիվի, նարինջ, թուրինջ, մանդարին, խնձոր, տանձ, բանան, նուռ, ալկոհոլային խմիչքներ՝ բարձրորակ կոնյակ՝ 10 շիշ 0.5 լ տարողությամբ, 5-ից 6 տարի հնեցմամբ, թնդությունը 40%, բարձորակ գինի՝ կարմիր անապակ 10 շիշ, կիսաքաղցր 8 շիշ, շամպայն՝ կիսաչոր 10 շիշ, ոչ ալկոհոլային խմիչքներ՝ բնական հյութ տարբեր մրգային համերով, հանքային սեղանի ջուր շշալցված 0.5լ տարաներով, գազավորված ըմպելիքներ՝ շշալցված 0,5լ պոլիմերային տարաներով (ընդհանուր ծավալը 1 անձի հաշվարկով մինչև 0.5լ), շոկոլադե կոնֆետներ՝ որակյալ,

			փաթեթավորված, տարբեր ապրանքանիշերի, խմորողեն (ֆուրշետային) առնվազն 5 տեսակ, լուծվող սուրճ: Անհրաժեշտ է ապահովել սպասքը, սեղանների տոնական ձևավորումը, սպասարկումը՝ առնվազն 2 մատուցողով: Մատակարարվող սննդի անվտանգությունը՝ սանիտարահամաճարակային կանոններին և նորմերին և «Սննդամերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: Միջոցառման անցկացման վայրի, հանդես եկող մասնակիցների, ինչպես նաև հյուրասիրության կազմակերպամն վերաբերյալ լրացուցիչ մանրամասները նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Կցված է 0d953f44.rar
4	79951110/69	Պարի միջազգային օր	Շենգավիթ վարչական շրջանի թվով 4 պուրակներում և այգիներում պետք է կազմակերպվեն պարի բաց դասեր (առնվազն 1-ական ժամ), որոնց համար անհրաժեշտ են 4 հնչյունային տեխնիկա՝ յուրաքանչյուրը 3-4կՎտ հզորությամբ և 4 պարային համույթ, որոնք նախապես պետք է համաձայնեցված լինեն պատվիրատուի հետ: Կցված է e2c914fd.rar
5	79951110/70	Ջազի միջազգային օր	Ջազի միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպել համերգային ծրագիր Գ. Նժդեհի անվան հրապարակում, 1-1,5 ժամ տևողությամբ: Միջոցառման անցկացման համար անհրաժեշտ է լուսային և ձայնային (հնչյունային) տեխնիկա 15-20 կՎտ հզորությամբ, ցուցադրման էկրան, չափսը՝ առնվազն 4մ x 6մ, տեսագրիչ՝ առնվազն 5000 լմն, հատուկ երաժշտական գործիքների համար նախատեսված բարձրախոսներ, բեմի ձևավորում երկաթյա կոնստրուկցիաներով և համապատասխան պաստառներով, 1 հաղորդավար, 4 հայտնի կատարողներ, 1 ջազ նվագախումբ, որոնք պետք է նախապես համաձայնեցված լինեն պատվիրատուի հետ: Կցված է 165a31b3.rar
8	79951110/73	Երեխաների իրավունքների	Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա առթիվ

		պաշտպանության օր	կազմակերպել տոնական միջոցառում Գ.Նժդեհի անվան հրապարակում, որի համար անհրաժեշտ է բեմի կամարի և տարածքի ձևավորում փուչիկներով, հնչյունային տեխնիկա՝ առնվազն 15կՎտ հզորությամբ: Համերգի ընթացքում 5 անգամ, առնվազն 5 կետից յուրաքանչյուրը 30 վրկ. տևողությամբ սառը հրավառություն, օդապղպջակներ 5 րոպե, շոու: Օրվա խորհրդին համահունչ կազմված համերգային ծրագիրը և երգացանկը պետք է համաձայնեցվի պատվիրատուի հետ, տևի առնվազն 120 րոպե՝ 2 հանրահայտ հաղորդավարի, առնվազն երգի-պարի 3 մանկական համույթների, 10 հանրահայտ երգիչ-երգչուհիների մասնակցությամբ: Միջոցառմանը զուգահեռ անհրաժեշտ է ապահովել կրկեսային համարներ, նաև կենդանիների ընդգրկմամբ, պետք է ապահովել հեքիաթի առնվազն 6 հերոսների մասնակցություն, որոնցից առնվազն 3-ը լինեն հսկա կերպարներ 3մ բարձրությամբ և խաղավար: Հանդիսատես երեխաների համար պետք է ապահովել փաթեթավորված, փայտիկով, շոկոլադապատ և/կամ մրգային պաղպաղակի հյուրասիրություն առնվազն 2500 հատ և 400-600 ՀՀ դրամ արժողությամբ նվերներ՝ առնվազն 800 հատ: Ապահովել առնվազն 150 երեխայի համար մանկական էլեկտրաքարշակով (գնացքով) 1 պտույտ: Կցված է 25b9cbda.rar
9	79951110/76	Երևանյան ամառ	Շենգավիթ վարչական շրջանի տարածքում գտնվող 5 այգիներում կամ պուրակներում կազմակերպել համերգային ծրագիր՝ 1 ժամ տևողությամբ: Յուրաքանչյուրում անհրաժեշտ է 1 հնչյունային տեխնիկա՝ 3-4կՎտ հզորությամբ, 1 հաղորդավար, 1 պարային համույթ, 5 անհատ կատարողներ, իսկ թվով 10 2022 թվականի ընթացքում հիմնանորոգված բակերում անհրաժեշտ է կազմակերպել մանկական զվարճախաղեր: Յուրաքանչյուր բակի համար անհրաժեշտ է 1 մուլտիերոս, 1 խաղավար-ծաղրածու,

			ինչպես նաև պաղպաղակ կամ նվերներ առնվազն թվով 3000 երեխաների համար: Միջոցառումների անցկացման վայրերը, նվերների և հանդես եկող մասնակիցների վերաբերյալ լրացուցիչ մանրամասները նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Կցված է 1d511bdc.rar
10	79951110/75	Երաժշտական փառատոն	Վարչական շրջանի երաժշտական դպրոցների մասնակցությամբ կազմակերպել երաժշտական փառատոն, որի համար անհրաժեշտ է վարձակալել վարչական շրջանի տարածքում գտնվող համերգային դահլիճ՝ առնվազն 200 նստատեղով և ընդարձակ նախասրահով: Ծրագրի տևողությունը պետք է լինի 1-1.5 ժամ, անհրաժեշտ է՝ հաղորդավար, հնչյունային տեխնիկա 10-12 կՎտ հզորությամբ, առնվազն 5 հատ բարձրախոսներով, որոնք պետք է ապահովեն երաժշտական դպրոցների սաների, երգիչների, համույթների ելույթների և կատարումների որակյալ լսելիությունը: Մասնակիցների համար ապահովել խրախուսական նվերներ: 1 նվերի արժեքը պետք է լինի 10.000-15.000 ՀՀ դրամի սահմաններում: Միջոցառման անցկացման վայրը, նվերների և հանդես եկող մասնակիցների վերաբերյալ լրացուցիչ մանրամասները նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Կցված է 7bf74f32.rar

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
Հասցե՝ Արգիշտիի փող. 1
Գանձապետարան
900022750542
02593108
Գ. Մուրադյան

MURADYAN GOR 3807720189

Digitally signed by MURADYAN GOR 3807720189
DN: c=AM, o=ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, givenName=•••, serialNumber=64f4792e3efd, cn=MURADYAN GOR 3807720189
Date: 2022.04.04 16:24:20 +04'00'

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
ԱՁ Լուսինե Ղազարյան
Հասցե՝ Երևան, Արցախի 4-րդ նրբ. 10/1 շ., բն. 113
Ամերիաբանկ ՓԲԸ
1570075367070100
87898963
Լուսինե Ղազարյան

_____
/ստորագրություն/

Կ.Տ

Կ.Տ

Digitally signed by GHAZARYAN LUSINE 5110700621
Date: 2022.04.04 11:46:05 AMST

Հավելված N 2
____/_____/2022թ. կնքված
ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/52 ծածկագրով պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության					
չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
				հասցեն	ժամկետը**
դրամ	360000.00	360000.00	1	Ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.04.2022թ. ներառյալ
դրամ	750000.00	750000.00	1	Ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.04.2022թ. ներառյալ
դրամ	1120000.00	1120000.00	1	Ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.04.2022թ. ներառյալ
դրամ	220000.00	220000.00	1	Ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10.05.2022թ. ներառյալ
դրամ	110000.00	110000.00	1	Ք. Երևան Շենգավիթ վարչական	Պայմանագիրն ուժի

				շրջան	մեջ մտնելու օրվանից մինչև 10.05.2022թ. ներառյալ
դրամ	1400000.00	1400000.00	1	Ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2022թ. ներառյալ
դրամ	648000.00	648000.00	1	Ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 31.08.2022թ. ներառյալ
դրամ	300000.00	300000.00	1	Ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2022թ. ներառյալ

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
Հասցե՝ Արգիշտիի փող. 1
Գանձապետարան
900022750542
02593108
Գ. Մուրադյան

MURADYAN GOR 3807720189
Digitally signed by MURADYAN GOR 3807720189
DN: c=AM, st=……, givenName=•••, serialNumber=64f4792e3efd, cn=MURADYAN GOR 3807720189
Date: 2022.04.04 16:24:36 +04'00'

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
ԱՁ Լուսինե Ղազարյան
Հասցե՝ Երևան, Արցախի 4-րդ նրբ. 10/1 շ., բն. 113
Ամերիաբանկ ՓԲԸ
1570075367070100
87898963
Լուսինե Ղազարյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by GHAZARYAN LUSINE 5110700621
Date: 2022.04.04 11:46:21 AMST

Հավելված N 3
____/_____/2022թ. կնքված
ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/52 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդամենը
1	79951110/66	Ծաղկազարդի տոն				360000.00	360000.00	360000.00	360000.00	360000.00	360000.00	360000.00	360000.00	360000.00	360000.00
2	79951110/67	Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոն (Զատիկ				750000.00	750000.00	750000.00	750000.00	750000.00	750000.00	750000.00	750000.00	750000.00	750000.00
3	79951110/68	Մայրության, գեղեցկությա				1120000.00	1120000.00	1120000.00	1120000.00	1120000.00	1120000.00	1120000.00	1120000.00	1120000.00	1120000.00

		ն և սիրո տոն													
4	79951110/69	Պարի միջազգային օր				220000.00	220000.00	220000.00	220000.00	220000.00	220000.00	220000.00	220000.00	220000.00	220000.00
5	79951110/70	Ջազի միջազգային օր				110000.00	110000.00	110000.00	110000.00	110000.00	110000.00	110000.00	110000.00	110000.00	110000.00
8	79951110/73	Երեխաների իրավունքների պաշտպանության օր				1400000.00	1400000.00	1400000.00	1400000.00	1400000.00	1400000.00	1400000.00	1400000.00	1400000.00	1400000.00
9	79951110/76	Երևանյան ամառ				648000.00	648000.00	648000.00	648000.00	648000.00	648000.00	648000.00	648000.00	648000.00	648000.00
10	79951110/75	Երաժշտական փառատոն				300000.00	300000.00	300000.00	300000.00	300000.00	300000.00	300000.00	300000.00	300000.00	300000.00

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
Հասցե՝ Արգիշտիի փող. 1
Գանձապետարան
900022750542
02593108
Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ
_____
/ստորագրություն/

MURADYAN GOR 38077201 89

Digitally signed by MURADYAN GOR 3807720189
DN: c=AM, sn=•••••••••, givenName=•••, serialNumber=64f4792e3efd, cn=MURADYAN GOR 3807720189
Date: 2022.04.04 16:24:49 +04'00'

ԿԱՏԱՐՈՂ
ԱՁ Լուսինե Ղազարյան
Հասցե՝ Երևան, Արցախի 4-րդ նրբ. 10/1 շ., բն. 113
Ամերիաբանկ ՓԲԸ
15700753670701000
87898963
Լուսինե Ղազարյան
_____
/ստորագրություն/

Կ.Տ

Կ.Տ

Digitally signed by GHAZARYAN LUSINE 5110700621
Date: 2022.04.04 11:46:34 AMST

Հավելված N 4
____/_____/2022թ. կնքված
ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/52 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20__թ.
Պայմանագրի համարը՝ ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/52-1
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայման ագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայման ագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	Ճաղկազարդի տոն							
2	Հիսուս							

	Քրիստոսի հրաշափառ Հարության տոն (Զատիկ							
3	Մայրության, գեղեցկության և սիրո տոն							
4	Պարի միջազգային օր							
5	Ջազի միջազգային օր							
8	Երեխաների իրավունքների պաշտպանության օր							
9	Երևանյան ամառ							
10	Երաժշտական փառատոն							

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված N 4.1
____/_____/2022թ. կնքված
ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/52 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Երևանի քաղաքապետարան -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ԱՁ Լուսինե Ղազարյան (այսուհետ՝ Կատարող) միջև 20__թ._____ -ին կնքված N ԵՔ-ԷԱՃԾՁԲ-22/52-1 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20__թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
Ծաղկազարդի տոն	դրամ	
Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոն (Զատիկ	դրամ	
Մայրության, գեղեցկության և սիրո տոն	դրամ	
Պարի միջազգային օր	դրամ	
Ջազի միջազգային օր	դրամ	
Երեխաների իրավունքների պաշտպանության օր	դրամ	
Երևանյան ամառ	դրամ	
Երաժշտական փառատոն	դրամ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն